

ՄԱՅՐԱԿԱՆ ԿՏԱԿ

Որդեա՛կ, ըսաւ մայրքս ինձի, վիշտերու տակ
 ջըղագալար,
 Անապատի նամբուն վըրայ, ա՛հ, իմ հոգեակ,
 մի՛ լար, մի՛ լար,
 Գիտեմ, որդի՛, քու եղբայրդ էր որ խըլեցին
 դեռ քիչ առաջ.
 Ու կ'արիւնի սիրտըս անվերջ անոր սիրով մըշ-
 տահառաջ:

Նոյն ձեռքերը յօշոտեցին հայրդ ալ հուժկու,
 դառնաքալսիծ
 Սա կոյսն անգօր քոյրդ է չֆնաղ, ազգէն կըտակ
 քեզի եւ ինձ.
 Եղբայրներդ են հոս թողըքուած, քեզի բոլորն
 ալ հարագատ,
 Կը տըւայտին գագաններու նանկերուն մէջ ա-
 րիւնացայտ:

Ամէն ինկող մաս է քեզմէ, որդի՛, ըսաւ մայրքս
 տըխուր.
 Մէկ մարմին ենք եւ մէկ հոգի, ազգը կ'ըլլայ
 փըշուր փըշուր,
 Տըղա՛ս, ամէն գացող գաւակ՝ քեզի եղբայր,
 ինձի որդի,
 Ամէն հատնող շունչ մըտերիմ անմահ շունչն է
 ժողովուրդի:

Մի՛ լար, ըսաւ մայրիկս ինձի. միայն եքէ դուն
 ողջ մընաս,
 Յիշէ բոլոր չարիքներն այս իբրեւ գագիր նենգ
 պատուիսս,

Տըկարն է միայն որ կուլայ, ըսաւ մայրիկս իբ-
 րեւ կըտակ,
 Հայուն վիշտը մէջըդ փոխուի՛ վըրէժներու թող
 անյատակ:

ՔԵԶԻ ՀԵՏ

Հայրենի՛ք իմ, եքէ կամ ու կը շնչեմ ես այսօր,
 Պատճառն այն է որ դուն կաս ու ֆուկին շուն-
 չըդ ներգօր
 Զիս կը պահէ կենդանի, կը բարախես մէջքս դուն,
 Ու կ'ուռնանամ ես քեզմով ու կը նայիմ վառ
 հեռուն:

Քու մասնիկդ եմ անբաժան, քեզմէ բռնի փըր-
 ցըւած.
 Քեզմէ հեռու, քեզի հետ, քեզմով միայն միշտ
 առկայծ.
 Հիգերուդ հետ մաքառող, լոյս օրերուդ հետ
 արբշիւ,
 Քեզմով միայն գոհ, հըպարտ, հերոսաշունչ իմ
 երկիր:

Նոյնացած եմ քեզի հետ, հոգիս քեզմէ անան.
 ջատ,
 Ու կը նանչնամ մէջըդ զիս, քեզի իբրեւ հարա-
 գատ,
 Քեզմով միայն կատարեալ, միայն քեզմով յաղ-
 քական.
 Իմ նորագիւտ ազնի՛ւ մայր, նոր օրերու Հայաս-
 տան:

Ֆիլստէլֆիա ՅԱԿՈՒԲ ԳՈՒՅՈՒՄՅԵԱՆ